



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ԼՃԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N/1 ---- 2.12.2013թ


ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ  
Ձեզ եմ ներկայացնում Լճափ համայնքի ավագանու 14.12.2013թ -ի թիվ 8 նիստի  
N16, N17, N18, N19 որոշումները:

Առդիր 6 թերթ

Լճափի գյուղապետ

Հ.Սինճյան



# ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի ավագանու N 8 նիստի

14.12.2013

Գ.Լճափ

Նիստին մասնակցում էին ավագանու երեք անդամներ  
նիստը վարում էր համայնքի ղեկավար Հ.Մինոնը  
Ֆարտուղարում էր Ս.Եփրեմյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին
2. Գյուղապետի, գյուղապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների հաստիքացուցակի, պաշտոնային դրույքաչափերի և թվաքանակի հաստատման մասին :
3. Լճափ գյուղի բնակիչ Սաշա Հովսեփյանի դիմումի քննարկումը իրեն պատկանող ՎԱԶ 2105 մակնիշի ավտոմեքենայի գույքահարկի զիջման մասին :
4. 2014թ բյուջեի նախագծի քննարկման հարցի մասին

Համայնքի ղեկավար

աշխատակազմի քարտուղար



Հ.Մինոնյան

Ս.Եփրեմյան

# Քաղվածք

14.12.2013

Գ.Լճափ

## ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ Համայնքի ավագանու N 8 նիստի

### ՈՐՈՇՈՒՄ 16-ից

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով .

Գյուղի ավագանին որոշում է .

1. ա/ Գյուղի տարածքում նոր կառուցվող շինությունների /ներառյալ ժամանակավոր/ շինարարության սկսման թույլտվության համար սահմանել տեղական տուրք 5000 /հինգ հազար/ դրամ յուրաքանչյուր շինության համար:

1.բ/ Գյուղի տարածքում հին շինությունների քանդման թույլտվության համար սահմանել տեղական տուրք 5000/հինգ հազար/ դրամ յուրաքանչյուր շինության համար:

2. ա/ Գյուղի տարածքում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանել տեղական տուրք տարեկան 20000/քսան հազար/ դրամ:

2.բ/ Գյուղի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար սահմանել տեղական տուրք տարեկան 30000/երեսուն հազար/ դրամ:

Ընդամենը գյուղում 50000/հիսուն հազար/ դրամ բոլոր հինգ խանութներից:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում 01.01.2014թ.

Լճափ համայնքի ղեկավար

Աշխատակազմի քարտուղար



/Հ. Միմոնյան/

/Ս.Եփրեմյան/

## Քաղվածք

14.12.2013

Գ.Լճափ

### ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ Համայնքի ավագանու N 8 նիստի

#### ՈՐՈՇՈՒՄ 17-ից

Գյուղապետի, գյուղապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների  
աշխատակիցների հաստիքացուցակի պաշտոնային դրույքաչափերի և թվաքանակի  
հաստատման մասին :

Գեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ  
կետի դրույթներով  
Համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել Գյուղապետին, գյուղապետարանի աշխատակիցների բյուջետային  
հիմնարկների աշխատակիցների հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը և  
թվաքանակը հետևյալ տեսքով.

#### Գյուղապետարան

1. Գյուղապետ՝	1 դրույք	160000	դրամ
2. Գյուղապետի տեղակալ	1 դրույք	85000	դրամ
3. Աշխատակազմի քարտուղար	1. դրույք	120000	դրամ
4. Հ/Շ առաջատար մասնագետ	1. դրույք	110000	դրամ
5. Հ/Շ առաջատար մասնագետ	1 դրույք	110000	դրամ
6. Հ/Շ առաջին կարգ մասնագետ	1 դրույք	85000	դրամ
7. Գործավար	1 դրույք	66500	դրամ
8. հավաքարար	1 դրույք	66500	դրամ
9. պահակ	1 դրույք	66500	դրամ
10. Մշակույթի տան տնօրեն	1 դրույք	75000	դրամ
11. Մշակույթի տան պահակ	1 դրույք	66500	դրամ

12. Գրադարանավար

1. դրույք 66500 դրամ

ՀՈԱԿ /մանկապարտեզ/

1. տնօրեն	1 դրույք	80000 դրամ
2. հաշվապահ	1 դրույք	66500 դրամ
3. պահակ	1 դրույք	66500 դրամ
4. դաստիարակ	1 դրույք	66500 դրամ
5. դաստիարակ	1 դրույք	66500 դրամ
6. դայակ	1 դրույք	66500 դրամ

2. որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թ-ի հուլիսից 1-ից

Լճափ համայնքի ղեկավար

Աշխատակազմի քարտուղար



/Հ. Սիմոնյան/

/Ս.Եփրեմյան/

# Քաղվածք

14.12.2013

Գ.Լճափ

## ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ Համայնքի ավագանու N 8 նիստի

### ՈՐՈՇՈՒՄ 18-ից

Լճափ գյուղի բնակիչ Ս.Հովսեփյանի դիմումի քննարկումը իրն պատկանող ՎԱԶ 2105 մակնիշի ավտոմեքենայի 2013թ-ի գույքահարկի զիճման մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 16-րդ հոդվածի դրույթներով  
Համայնքի ավագանին որոշում է.

1.Զիճել Սաշա Հովսեփյանին պատկանող ՎԱԶ -2105 մակնիշի ավտոմեքենայի 2013թ-ի գույքահարկը ընդամենը 6577 /վեց հազար հինգ հարյուր յոթանասու յոթ / դրամ :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լճափ համայնքի ղեկավար

քարտուղար



Հ.Սիմոնյան

Ս.Եփրեմյան

## Քաղվածք

14.12.2013

Գ.Լճափ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ Համայնքի  
ավագանու N 8 նիստի

### ՈՐՈՇՈՒՄ 19-ից

2014 թ-ի բյուջեյի նախագծի քննարկման հարցի մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «բյուջետային համակազմի» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ հոդվածի դրույթներով

համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել 2014 թ-ի բյուջեյի նախագիծ

2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լճափ համայնքի ղեկավար

Աշխատակազմի քարտուղար



/Լ. Սիմոնյան/

/Ս. Եփրեմյան/